

PEARLS OF ARMENIAN HERITAGE

ՍՐԲՈՑ ՏՕՆԵՐ

Հայ առաքելական եկեղեցին Բուն Բարեկենդան տօնէն սկսեալ մինչեւ հոգեգալստեան տօնէն մէկ շաբաթ անց, 104 օրեր սուրբերու հատկացուած օրեր չունի: Առաջին սրբոց տօնը կը սկսի Սրբուհի Յռիփսիմէին եւ Սրբուհի Գայիանէի տօներով:

Սուրբերու տօները Աստուածապաշտութեան եւ եկեղեցական ծէսերու կարեւոր մէկ մասը կը կազմէ: Եկեղեցական սրբազան արարողութիւններով, որոնք յատուկ են սուրբերու տօներուն, տարբեր դէպքերու կապուած Յիսուս Քրիստոսի եւ հուգեւոր խորհրդակատարութեանց, յատկացուած են տարուայ ընթացքին: Նպատակը այս տօնախմբութեանց յիշատակել է օրուայ խորհուրդը փառաբանելով զԱստուած, օրինակ քրիստոնէաներու եւ աւանդել յաջորդ սերունդներուն: Այս տօները յատկապէս նուիրուած են Յիսուս Քրիստոսի վարդապետութեանը, Աստուածածնին, խաչի տօներուն, սուրբերուն եւ մարտիրոսներուն, ինչպէս նաեւ մեր պարագային ազգային նշանակութիւն ունեցող քրիստոնէութեան հետ առընչուող իրադարձութիւնները, որպիսիքն են, Թարգմանչաց վարդապետները, Վարդանանց զինուորները եւ վերջերս սրբադասուած Հայոց մեծ եղեռնի զոհերու տօնը: Մեր եկեղեցական տօներուն մէջ նաեւ երբեմն կը տեսնենք հեթանոսական սովորութիւններ եւ աւանդութիւններ որոնք փոխանցուած են

մինչեւ մեր օրերը: Եկեղեցին կիրակի օրը յատկացուած է Քրիստոսի յարութեանը, իսկ շաբաթուայ միւս օրերը սրբոց եւ պահքի օրեր են:

ՃԱՐԺԱԿԱՆ ԵՒ ԱՆՃԱՐԺ ՏՕՆԵՐ

Անշարժ տօները անոնք են որոնց թուականները հաստատուն են եւ փոփոխութեան չեն ենթարկուիր`

1. Ճրագալոյց Ս. Ծննդեան (յունուար 5)
2. Ս. Ծնունդ եւ Աստուածայայտնութիւն Տեառն (յունուար 6)
3. Ս. Ծննդեան ութօրեքը (յունուար 7-12)
4. Անուանակոչութիւն (յունուար 13)
5. Տեառնընդառաջ (փետրուար 14)
6. Աւետում (ապրիլ 7)
7. Ծնունդ Ս. Աստուածածնի (սեպտեմբեր 8)
8. Ընծայումն Ս. Աստուածածնի (նոյեմբեր 21)
9. Յղութիւն Ս. Աստուածածնի (դեկտեմբեր 9)

Որոշակի հաստատուն օրեր ունին նաեւ Վերափոխման (օգոստոս 15) եւ խաչվերաց (սեպտեմբեր 14) տօները: Որոշակի որովհետեւ անոնք կը տօնուին այդ օրերուն ամէնամօտիկ կիրակի օրը: Շաբաթուայ մէջ միայն երկուշաբթի, երեքշաբթի, հինգշաբթի եւ շաբաթ օրերը սուրբերու յիշատակութեան օրեր են:

ՇԱՐԺԱԿԱՆ ՏՕՆԵՐ

Շարժական տօները կապուած են Ս. Զատիկի տօնի հետ, համաձայն լուսնի լրումին:

ՍՐԲՈՑ ԶՈՒՓՍԻՄԵԱՆՑ ԵՒ ԳԱՅԻԱՆԵԱՆՑ ՏՕՆ

Յոճմի Դիոկղէտիանոս կայսրի օրերուն ձգնաւորի կեանքով կ'ապրէին քրիստոնէայ խումբ մը կոյսեր որոնց գլխաւորն էր Գայիանէն: Զեթանոս կայսրը իմանալով անոնցմէ Զոհիփսիմէի անկրկնելի գեղեցգութեան մասին որոշեց ամուսնանլ իր հետ: Կայսրի այս միտքը լսելով կոյսերը գաղտնաբար փախան Զոճմէն: Դէպի արեւելք ուղուելով հասան մինչեւ Յայաստան եւ Վաղարշապատ քաղաքի մէջ ապաստարան գտան: Դիոկղէտիանոս կայսրը այս իմանալով հրովարտակ ղրկեց Յայոց Տրդատ թագաւորին որ Զոհիփսիմէին գտնէ եւ ետ ղրկէ Զոճմ եւ կամ իրեն պահէ եթէ հաւնի զինք: Տրդատ թագաւոր Զոհիփսիմէի գեղեցկութիւնով տարուած կը ցանկանայ բռնի ամուսնանալ իր

հետ: Քրիստոնէայ Զոհիփսիմէն հաւատարիմ մնալով իր ուխտին Աստուծոյ օգնութեամբ կը դիմադրէ մինչեւ վերջ մերժելով Յայ թագաւորին, որովհետեւ ան հեթանոս էր եւ կը փախի արքունիքէն: Տրդատ թագաւոր դահիճներ կը ղրկէ Զոհիփսիմէի եւ իր ընկերներուն ետեւէն գտնելու եւ անոնց բոլորին սպանելու որոնք 32 հոգի էին, ինչպէս նաեւ Մարիանէ կոյսը: Թագաւորի հրամանով նաեւ դաժանաբար կը նահատակուի Գայիանէն իր երկու ընկերներու հետ միասին: Կոյսերու նահատակութենէն ինը օրեր ետք Գրիգոր Լուսաւորիչ հողին կը յանձնէ եւ անոնց տեղը վկայարաններ, մատուրներ կը կարուցէ: Ս. Զոհիփսիմէի եւ 32 կոյսերու տեղը քաջ ժամանակ անց եկեղեցի կը կառուցուի, որ Ս. Զոհիփսիմէի անունով ալ կը կոչուի: Ս. Մարիանէի վկայարանի տեղը՝ Ս. Շողակաթ եկեղեցին, եւ Ս. Գայիանէի եւ երկու կոյսերու վկայարանի տեղը՝ Ս. Գայիանէ եկեղեցին կը կերտուի: Ս. Զոհիփսիմէանց եւ Ս. Գայիանէանց տօնին ի յիշատակ եոթերորդ դարու մէջ Կոմիտաս Ա. Կաթողիկոսը կը նուիրէ «Անձինք նուիրեալք» շարականը:

